

Հայ Գարբերական Մամուլի Նորայայտ Անուններ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Հատ բան գրուած է հայ պարբերական մամուլի մասին: Հրատարակուած են ուսումնասիրութիւններ, ինչպէս նաեւ մասնակի կամ ամբողջական ցուցակներ: Ինչ խօսք որ կատարուած իրաքանչիւր աշխատանք լոյս աշխարհ բերած է մութին մէջ մնացած թերթեր, կամ յաւելեալ ծանօթութիւններ՝ արդէն իսկ ծանօթ թերթերու մասին: Բայց դժբախտաբար, մինչեւ այսօր տակաւին չունինք հայ պարբերական մամուլի մատենագիտական լիակատար ցուցակ մը: Բոլոր ցուցակներն ալ պակասաւոր են ու խոցելի զանազան վրիպումներով: Անշուշտ տարբեր ալ չէր կրնար ըլլալ՝ նկատի առած հայ պարբերական մամուլի շուրջ երկդարեայ հոլովոյթը:

Հետագայ քանի մը էջերով պիտի փորձենք տեղեկութիւններ տալ հայ պարբերական մամուլի երեսուն հինգ ներկայացուցիչներու մասին, որոնք մինչեւ այսօր անծանօթ մնացած են հայ մամուլի պատմագրութեան, եւ հետեւաբար՝ տեղ չեն գտած հայ մամուլին նուիրուած մատենագիտական աշխատասիրութիւններուն մէջ:

Այստեղ յայտնաբերուած նոր անուններէն ումանց մասին մեր տեղեկութիւնները ուղղակի քաղած ենք խնդրոյ առարկայ թերթի մէկ օրինակէն, իսկ մնացեալներու մասին՝ զանազան աղբիւրներէ: Յատկապէս օգտագործած ենք Արեւմտեան Հայաստանի զանազան քաղաքներուն ու շրջաններուն նուիրուած հայրենակցական միութիւններու հրատարակած հատորները, որոնք յաճախ շատ հետաքրքրական տեղեկութիւններ կը բովանդակեն տուեալ շրջանի հայ պարբերական մամուլի մասին:

Տպագիր եւ խմորատիպ քերթերու կողքին, մեր այս ցանկին մէջ նկատի առած ենք նաեւ ձեռագիր քերթերը, հակառակ այն իրողութեան որ որոշ բանատէրներ ձեռագիր քերթերը չեն ուզեր պարբերական մամուլի «իրաւասու» անդամ նկատել: Մենք կը բուենք անոնց անունները, եւ ապագայ բանատէրներուն կը ձգենք անոնց նակատագրին որոշումը:

Այնուամենայնիւ, կը կարծենք թէ ձեռագիր քերթերը ունին յատուկ նշանակութիւն: Այս պարագան «իր իրաւունք»ը կ'արդարացնէ, երբ նկատի առնենք զանոնք խմբագրած դպրոցական «խըմբագիրներ»ը, որոնք հետագային իրենց պատանեկան սէրը շարունակելով՝ դարձան հայ մամուլի եւ գրականութեան պատմութեան մէջ իրենց արդար պատուանդանը նուաճած դէմքեր, ինչպէս՝ Երուանդ Օտեան, Վահան Թէֆէեան, Թէոդիկ, Սիմոն Վրացեան, Ինորա եւ ուրիշներ:

Թերթի մը ծանօթ կամ անծանօթ ըլլալը ստուգելու համար դիմած ենք Ա. Կիրակոսեանի «Հայ Մամուլի Մատենագիտութիւն»¹ աշխատասիրութեան: Նկատի առած ենք նաեւ այդ բուակահանէն ետք լոյս տեսած մենագրութիւններն ու յօդուածները: Հետեւաբար՝ հաս պիտի ներկայացնենք մինչեւ «Հ.Պ.Մ.Մ.»ի ընդգրկած բուականը (1967) լոյս տեսած քերթերը միայն:

Ն Ո Ր Ա Յ Ա Յ Տ Թ Ե Ր Թ Ե Ր

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՍԻՐՏ (Բիւրական-Էջմիածին, 1900 թ.): Աշակերտական դաղտնի պարբերաթերթ: Ձեռագիր: Խմբագիր՝ Սիմոն Վրացեան, երբ կ'աշակերտէր Էջմիածնի Գէորգեան ճեմարանին: Լոյս տեսնել սկսած է 1900 թ.ի ամառը, Բիւրական դիւղին մէջ, դպրոցական արձակուրդի ամիսներուն: Ապա՝ շարունակուած էջմիածնի մէջ: Լոյս տեսած է հաւանաբար մինչեւ 1906 թ.² Խմբագրին ճեմարանէն շրջանաւարտութեան տարին:

ԱՐԳԷՈՍ (Ատանա): Խմբագիրներ՝ Գրիգոր Արոյեան եւ Բարսեղ Տատուրեան: Շատ հաւանաբար 1920 թ.ին, կամ 1921 թ.ին: Կարճատեւ³:

1. Ա. Կիրակոսեան, Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն (1794-1967), Համահաւաք Ցանկ, Երեւան, 1970: Ասկէ ետք՝ «Հ.Պ.Մ.Մ.»:

2. Սիմոն Վրացեան, Կեանքի Ուղիներով, Ա. հտր., Պէյրութ, 1967, էջ 114:

3. Բիւզանդ եղիայեան, Ատանայի Հայոց Պատմութիւն, Անքիլիսս, 1970, էջ 713:

ԱԻԵՏԱՐԱՆԻԶ (Նիւ Եորք, 1933 թ.): Կրօնական ամսաթերթիկ: Մեր տրամադրութեան տակ զտնուած թիւերէն առաջինը կը կրէ Ը. տարի, Յունիս, 1940 թուականը, իսկ վերջինը՝ Թ. տարի, Մարտ, 1941 թ.: Հետեւաբար՝ կարելի է ենթադրել որ լոյս տեսնել սկսած է 1933 թ.ին: 4 էջ (10.5×15.5 սմ.):

«Հ.Պ.Մ.Մ.»-ը կը յիշատակէ նոյնանուն կրօնական ամսաթերթիկ մը (թիւ 1371), հրատարակուած Նիւ Եորք, նոյն չափերով ու ծաւալով, բայց հրատարակութեան թուականը ցոյց կու տայ 1947 թ. Յունիս ամիսը: Արդեօք այս երկուքն ալ նո՞յն թերթն են, թէ տարբեր. դժուար է պատասխանել:

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Չ

«Ու երբ աչ կողմը կամ ձախ կողմը խոս-
րելու ըլլաւ, եւ ակաճեցնեղ ետեւի իօսք մը
պիտի յսեն որ կ'ըսէ, ԱՍԻԿԱ է ՏՄՄԲԱՆ,
ԱՍՍԻ Մէջ ԳԱԼԵՅԻՔ», Եսա.30.21»

Ը. ՏԱՐԻ Ը ՈՒՆԻՍ 1940 ՆԻՒ ԵՐԿ

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Չ

«Անկ կը հարգեմ Աւետարան, Բանի Աստուծոյ զօր-
քի66 է այն՝ բոլոր հաւատացեալներու փրկութեան հա-
մար: ԼՈՌՎՄ. 1. 16»

ԱՊՐԻԼ 1949

ՄՐԱՎԻԱՏԻ ՄԱՅՐ ՄԸ

Տ-րիներ առ-ջ. Մարտի-ցի քրիստոնէս-
յայր մը կ-ր որ երեք ազ-ջներ ունէր. Անեք
Յեջուցած էր սաստապ-չառութեան և և-

ԱԻԵՏԱՐԱՆԻԶ (Հայէպ): Կրօնական ամսաթերթիկ: Մեր մօտ զտնուած թիւերէն առաջինը կը կրէ 1949 Ապրիլ թուականը, իսկ վերջինը՝ 1962 թ. Մարտ-Ապրիլ: 4 էջ (11×15 սմ.):

Մինչեւ 1950 թ. Յունիսի թիւը տպարանի անուն չի յիշատակուիր, իսկ 1950 թ.ի Օգոստոսի թիւին, եւ անոր յաջորդող բոլոր թիւերուն վրայ կ'երեւի «Տպարան Մարանաթա, Հայէպ, Սուրիա» մականդրութիւնը, իսկ 1954 թ. Հոկտեմբերի թիւին ու անոր յաջորդող քանի մը թիւերուն մէջ կ'ըսուի. «Աւետարանիչ» թերթիկէն աւելի ցրուել ուղողները թո՛ղ «Աւետարանիչ»ի հեղինակին դիմումը ընեն. — Վեր. Ս. Շանլեան, Բասատէնա, Գալիֆորնիա»:

Ի՞նչ է արդեօք կապը Վեր. Ս. Շանլեանին եւ այս ամսաթերթին միջեւ: Արդեօք այս թերթիկը նոյն տարիներուն Նիւ Եորքի մէջ հրատարակուող նոյնանուն ամսաթերթիկին արտատպո՞ւմն է: Դժուար է պատասխանել, մանաւանդ որ երկու թերթերէն ալ բաւարար թիւեր չունինք մեր տրամադրութեան տակ:

ԹԵԼԷՖՕՆ (Ատանա): Լոյս տեսած է 1918 թ.ի զինազաղարէն ետք, մինչեւ Կիլիկիոյ պարպումը, այսինքն՝ 1918-1922 թթ.ու միջեւ⁴:

4. Սուրիահայ Տարեցոյց 1924 (Պատրաստեցին՝ Մ. Անէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան), Ա. տարի, Գահիրէ, էջ 270:



Ահա ես դուրը կայնեմ եմ ու կը գարնեմ. եքէ մէկը
իմ ձայնս լսէ ու դուրը բանայ, անոր քով պիտի մտնեմ
եւ անոր հետ քնքրիք պիտի բնեմ . ան ալ ինձի հետ:

Յայտ. 3, 29:

ԹԻԻ 10 ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ 1953:

ԼՈՒՍԱՐՁԱԿ (Պուէնոս Այրէս): Կրօնական թերթիկ: 4 էջ
(13.5×17.5 սմ.): Այս թերթիկէն մեր տրամադրութեան տակ զըտ-
նուող թիւերը կը տարուբերին 1953 թիւ 10-ի եւ 1958 թիւ 37-ի միջեւ:

ԾԱՂԻԿ (Պէյրութ): 1923-1925 թթ. ու միջեւ: Գրական հաւա-
քածոյ: Հրատարակութիւն Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան: Այս
թերթին մէջ, մինչեւ միութեան «Ովասիս» ամսաթերթի հրատարա-
կութիւնը, ընդօրինակուած են պատանիներու գրական կտորները,
գրական ժողովին մէջ ասուլիսի ենթարկելէ յետոյ: Շատ հաւանա-
բար ձեռագիր⁵:

ԾԻՐԱՆԻ (Մեզիրէ, Խարբերդ): Խմբագիր՝ Մեզիրէի Գերմա-
նական դուլէճի աշակերտներէն Թորոս Պողոսեան: Լոյս տեսած է
տասը թիւ, ու զազրեցուած դուլէճի հայրիկին կողմէ, որմէ ետք
հաստատութիւնը հրատարակած է «Ամէնուն Համար» թերթը (1910
թ.): «Ծիրանի»ն բաժանորդ կ'ունենայ մինչեւ իսկ Ամերիկայէն:

Թերթը պաշտօնական բնոյթ չի կրեր, այլ խմբագրի անձնական
հրատարակութիւնն է:

«Ծիրանի»ին աշխատակցած է դուլէճի աշակերտներէն Մալխաս
Աւետիսեանը՝ Քամառիկ Քեաթիպա ծածկանունով⁶:

ԿԻԼԻԿԻԱ (Ատանա, 1908-1909 թթ.): Խմբագիր՝ Պօղոս Եղիայ-
եան⁷:

5. Գ. Խաչերեան, Պատմական Ակնարկ, տես՝ «Ովասիս» (ամսագիր), Պէյ-
րութ, 1926, քիւ 12, էջ 195-196:

6. Բ. Կ. Ժամկոչեան, Պատմութիւն Մամուլէթ Իւլ Ազիզի Գերման Որբա-
նոցներու, Պէյրութ, 1973, էջ 58:

7. Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 711:

ՀԱՅՍՍԱՆ (Տրպալիզոն, 1848 թ.) : Ձեռագիր թերթ⁸ :

Եթէ նկատի չունենանք ձեռագիր թերթը պարբերական մամուլի «Իրաւասու անդամ» նկատելու կարգ մը բանասէրներու վերապահութիւնը, «Հայաստան»ը կը հանդիսանայ մայր հոդին վրայ լոյս տեսած առաջին հայերէն թերթը, որ տասը տարիով կը կանխէ Խրիմեան Հայրեկի Վանի մէջ հրատարակած «Արծիւ Վասպուրահանի»ն, (հրատարակուած 1858 թ.ին) :

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՁԱՅՆ (Հալէպ) : Կրօնական թերթիկ : Անթուակիր : Մեր տրամադրութեան տակ է այս թերթիկին առաջին թիւը : 4 էջ (12×17.5 սմ.) : Այս թիւին միակ յօդուածը ստորագրուած է Յ. Գ. Կ.ի կողմէ, որ նոյն ինքն Յակոբ Կոճիզեանն է, որուն անունն ու հասցէն դրուած են թերթին վերջաւորութեան : Շատ հաւանական է որ ինք եղած ըլլայ նաեւ անոր խմբագիրը :

ՄԱՆԻՇԱԿ (Կարին) : Դպրոցական-աշակերտական ձեռագիր թերթ (Սանասարեան վարժարանի) : Շատ հաւանաբար 1901-1902 թուականներուն : Խմբագիր՝ Տիգրան Ծամհուր⁹ :

ՄԱՍԻՍ (Արմաշ, 1896 թ.) : Կրօնական շաբաթաթերթ : Այս թերթին հրատարակութեան ձեռնարկողները եղած են Եղիշէ Արք. Դուրեանն ու Մաղաքիա Օրմանեան Սրբազանը¹⁰ :

ՄՐՁԻԻՆԻ ԲՈՅՆ (Խարբերդ) : Ձեռագիր ամսաթերթ : Հրատարակութիւն Եփրատ Գոլէճի աղջկանց վարժարանի : Խմբագիր՝ Օր. Աղաւնի Ճանիկեան, հակողութեամբ Տիրուհի Եըլուզեանի : Թերթը կը պարունակէ տեղեկութիւններ դպրոցական կեանքէ, ինչպէս նաեւ դուրճալիքներ եւ բանաստեղծութիւններ¹¹ :

ՅՈՅՍ (Դամասկոս) : 1922-1925 թթ.ու միջեւ : Խմբորատիպ : Հրատարակութիւն Հայ Պատանեկան Միութեան : Լոյս տեսած է երկու թիւ¹² :

8. Արշակ Ալոյսամեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Ա. հտր., Գահիրէ, 1937, էջ 1286 :

9. Մ. Պարսամեան, Ծամհուր, տես՝ «Յեղափոխական Ալպոմ», Պէյրուք, 1971, էջ 187 :

10. Փառէն Ծ. Վ. Մելիքեան, Սրտցաւ Եկեղեցականի Մը Դատաստանը, տես՝ «Սուրբիակայ Տարեցոյց 1924», Ա. տարի, էջ 190 :

11. Մամուկ ձիգմէնեան, Խարբերդ եւ Իր Ձաւակները, Ֆրեզո, 1955, էջ 402 :

12. Գ. Խաչերեան, Նշ. աշխ., տես՝ «Ովասիս», Պէյրուք, 1926, քիւ 12, էջ 195 :

ՆՈՐ ԼՈՅՍ (Կարին) : Աշակերտական գրական ամսաթերթ : Հրատարակութիւն Ֆրէյր Մարիստներու Երկրորդական վարժարանի տեսչութեան : Լոյս տեսած է 1911 թ.-էն առաջ, ու շարունակուած հաւանաբար այդ թուականէն ետք ալ :

«Նոր Լոյս»ին աշխատակցած է նաև «Տարաբախտ Ուսանողը» վիպակի նոյնքան տարաբախտ հեղինակը՝ Հրանդ Համբարեան¹³ :

ՆՈՐ ՀՈՍԱՆՔ (Վան) : Գաղտնի պարբերաթերթ : Խմորատիպ : Լոյս տեսած է 1900-1909 թթ. ու միջոցին¹⁴ :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ (Կեսարիա, 1912 թ.) : Հնչական հակումով խմորատիպ թերթ¹⁵ : Եղած է օրկան «Միացեալ Ուսումնարանի Ուսանողական Միութեան» : Արտօնատէր՝ Օննիկ Եղիազարեան, խմբագիր՝ Արամ Պետրոսեան¹⁶ :

ՇՈՒՇԱՆ ԾՈՓԱՅ (Խարբերդ, 1912 թ.) : Կիսամսեայ հանդէս : Զեռագիր : Լոյս տեսած է երկու թիւ, կամ՝ աւելի¹⁷ :

ՈՏԱՆԱՒՈՐԱՏՈՒՓ (Բիւրական-էջմիածին, 1900 թ.) : Աշակերտական, զուտ բանաստեղծական գաղտնի պարբերաթերթ : Զեռագիր : Առաջին թիւը լոյս տեսած է 1900 թ.ի ամառը, Բիւրական գիւղին մէջ, դպրոցական արձակուրդի ամիսներուն, եւ յետոյ՝ շարունակուած էջմիածնի մէջ : Խմբագիրներ՝ Սիմոն Վրացեան, Արամ Դադեան եւ Մարտիրոս Ստեփանեան (երբ կ'աշակերտէին էջմիածնի Գէորգեան ճեմարանին)¹⁸ :

Առաջին թիւի ճակտին, ծանուցման մէջ ըսուած է .

«Ոտանաւորատուփը մեր
«Լոյս է տեսնում տօն օրեր,
«Ով ուզում է մասնակցել՝
«Շտապէ նիւթեր մեզ հասցնել»¹⁹ :

13. Հրանդ Համբարեան, *Տարաբախտ Ուսանողը*, Բ. տպագրութիւն, Պէյ-րուք, 1953 : Հրատարակիչ Կարօ Համբարեանի՝ հեղինակին մասին տուած ծանօթութիւններէն, էջ 5 :

14. Տես՝ *Վասպուրական* (Հրատարակութիւն Վասպուրականի Հայրենակցական Միութեան (Թարիք), Վենետիկ, 1930, էջ 94 :

15. Ա. Ալպոյանեան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ*, Բ. հտր., Գահիրէ, 1937, էջ 1407 :

16. Ա. Ալպոյանեան, *Նշ. աշխ.*, Ա. հտր., էջ 1290 :


17. Մանուկ ձիզմեան, *Նշ. աշխ.*, էջ 422 :

18. Ս. Վրացեան, *Նշ. աշխ.*, էջ 114 :

19. Նոյնը, էջ 115 :

ՈՒՍԱՆՈՂ (Հալէպ, 1921 թ.): Ամսաթերթ: Հրատարակութիւն Հայ Ուսանողական Միութեան: Խմորատիպ: Այս թերթէն մեր տրամադրութեան տակ կը գտնուի մէկ թիւ միայն, 1922 Ապրիլ, Բ. Տարի, թիւ 4: Հետեւաբար կարելի է ենթադրել որ սկսած է լոյս տեսնել 1921 թ.-ի Յունուարին: 20 էջ (21×26.5 սմ.):

Այս թիւը կը սկսի «Ապրիլ 24 Համազգային Մեծ Սգատօն» յօդուածով: Ապա՝ խմբագրական մը, «Գրադարան եւ Աշակերտութիւն» խորագրով, որուն կը յաջորդեն քանի մը բանաստեղծութիւններ, արձակ էջեր, թարգմանութիւն մը, ինչպէս նաեւ տեղական-մշակութային լուրեր:



ՈՒՍԱՆՈՂ (Հալէպ): Խմորատիպ: Այս թերթէն մեր տրամադրութեան տակ կը գտնուի մէկ թիւ, 22 Օգոստոսի, 1948 թ.: 16 էջ (21×28 սմ.): Հրատարակութիւն Հալէպահայ Ուսանողական Միութեան: Այս թիւին առաջնորդողը (խմբագրական) ստորագրած է մի ոմն Կարապետ, որ շատ հաւանաբար թերթին խմբագիրն է:

«Որոնումներ՝ Նոր Ուղի...» վերնագրով խմբագրականէն ետք, կան երկու յօդուածներ՝ «Ուսման Նպատակները» եւ «Մինեման» խորագիրներով, կայ նաեւ յօդուած մը, նուիրուած միութեան մահացած անդամներէն Լուսին Տաքչսեանի յիշատակին: Ապա՝ արտասովորներ Յ. Պարոնեանէն եւ Մ. Զարիֆեանէն, ինչպէս նաեւ ծիծաղի եւ զանազան դիտելիքներու բաժին մը:

ՊԱՅԲԱՐ (Ուրֆա): Խմորատիպ թերթ: Հրատարակութիւն Հ. Յ. Դանակցութեան «Յառաջդիմասէր Պատանեկան Միութեան»:

Լոյս տեսած է 1908 թ-ի Օսմանեան սահմանադրութենէն ետք²⁰ :

ՊԱՏԱՆԻ (Խարբերդ) : Խմորատիպ : Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Պատանեկան Միութեան : Լոյս տեսած է 1908–1915 թթ-ու միջեւ²¹ :

ՊԱՏԱՆԻ (Հալէպ) : Ամսագիր : Հրատարակութիւն Հայ Պատանեկան Միութեան²² : Հալէպ հրատարակուող «Ուսանող» ամսաթերթը, 1922 թ-ի իր թիւերէն մէկուն մէջ կը շնորհաւորէ Պատանեկան Միութիւնը, իր «Պատանի» թերթը խմորատիպ հանելուն համար²³ : Հետեւաբար կարելի է ենթադրել որ թերթը նախ ձեռագիր եղած է, ու յետոյ միայն խմորատիպի վերածուած :

ՋԱՀԱԿԻՐ (Ուրֆա) : Խմորատիպ գաղտնի թերթ : Լոյս տեսած է 1904 թ-էն կարճ ժամանակ մը ետք, 10–11 թիւ : Հրատարակութիւն Ամերիկեան Որբանոցի որբերու եւ որբանոցէն դուրս քանի մը «գաղափարակից» պատանիներու : Թերթը կը հրատարակուէր միակնի Սարգիս Եօթնեղբայրեանի տան մէջ²⁴ :

ՋԱՆՔ (Ուրֆա) : Խմորատիպ թերթ : Հրատարակութիւն Դաշնակցութեան Պատանեկան Միութեան : Լոյս տեսած է 1908 թ-ի Օսմ. սահմանադրութենէն ետք²⁵ :

ՍԷՅՀԱՆ (կամ ՍԷՅՀՈՒՆ, Ատանա) : Կառավարական սովորական լրատու թերթ : 1860–ական թուականներ : Մէկ երեսը հայատառ թրքերէն, միւս երեսը՝ օսմաներէն, նոյն իմաստով ու բառերով : Հայատառ բաժնի խմբագիրն էր մունճուսունցի (Կեսարիա) Պետրոս վարժապետ Տէր Թորոսեանը²⁶ :

20. Յակոբ Հիսայեան, Սերունդը, Որ Կը Պատրաստուէր Ուրֆայի Ազգային Վարժարաններուն Մէջ, տես՝ Արամ Սահակեան, «Դիւցազնակամ Ուրֆան եւ իր Հայորդիները», Պէյրուք, 1955, էջ 744 :

21. Լուիսֆի Մինաս, Հ. Յ. Դաշնակցութիւնը Խարբերդի Մէջ 1899–1915. տես՝ վահէ Հայկ, «Ետքերդ եւ Անոր Ոսկեղէն Դաշտը», Նիւ Եորք, 1959, էջ 626 :

22. Գ. Խաչերեան, Նշ. աշխ., տես՝ «Ովասիս», Պէյրուք, 1926, քիւ 12, էջ 194 :

23. Տես՝ Ուսանող (ամսաթերթ), Հալէպ, 1922, քիւ 4, Ապրիլ, էջ 52 :

24. Կարապետ Գափափեան, Մեր Որբանոցը Յեղափոխութեան Վտարան Մըն էր, տես՝ Ա. Սահակեան, «Դիւցազնակամ Ուրֆան...», էջ 482 :

25. Յ. Հիսայեան, Նշ. աշխ., տես՝ Ա. Սահակեան, «Դիւցազնակամ Ուրֆան...», էջ 744 :

26. Բ. Եղիայեան, Նշ. աշխ., էջ 618 եւ 710 : Նաեւ տես՝ Ա. Ալպոյանեան, Նշ. աշխ., Բ. հտր., էջ 2303 :

Յակոբ Թէրզեան, որ սահմանադրութեան շրջանին Ատանայի մէջ հրատարակուող «Տաւրոս» թերթին խմբագիրը եղած է, խօսելով «Սէյհան»ի մասին, չի յիշատակեր անոր հայատառ թրքերէն բաժինը²⁷: Նոյնը կ'ընեն Բիւզանդ Եղիայեան²⁸ եւ Արշակ Ալպոյաճեան²⁹, որ սակայն մինչեւ 1894 թուականը հայերէն թերթ ունեցած քաղաքները յիշատակած ժամանակ, կու տայ Ատանայի անունը³⁰: Այս ակնարկութիւնը շատ հաւանաբար կը վերաբերի «Սէյհան»ին:

ՍԻՀՈՒՆ (Ատանա): «Ատանայի Հայոց Պատմութիւն» գիրքը, խօսելով Ռուբէն Շահպաղեանի մասին, կ'ըսէ որ ան 1900 թ.ին Ատանայի «Սիհուն» թերթի եւ տպարանի գրաշարը եղած է, հայերէն, յունարէն եւ ֆրանսերէն լեզուներով³¹: Դժբախտաբար յաւելեալ մամբամանութիւններ չեն տրուիր:

ՍՈՆՍԿ (Խարբերդ): Ձեռագիր թերթ: 1870–1877 թթ.ու միջեւ: Խմբագիր՝ Սմբատեան վարժարանի աշակերտներէն Առաքել Կ. Պետիկեան (ծագումով ասորի, գրական ծածկանունով՝ Գիսակ)³²:

ՎԱՐԺԱՐԱՆ (Կարին): Ձեռագիր թերթ Սանասարեան վարժարանի աշակերտներու, շատ հաւանաբար 1901–1902 թուականներուն³³:

ՏԱՏՐԱԿ (Խարբերդ): Ձեռագիր թերթ: 1870–1877 թթ.ու միջեւ: Խմբագիր՝ Սմբատեան վարժարանի ուսուցիչներէն Սարգիս Զատուրեան (կոյր Սարգիս, Սարգիս Վարժապետ)³⁴:

ՏԱԻՐՈՍ (Ատանա, 1908–1909 թթ.): Խմբագիր՝ Յակոբ Թէրզեան³⁵:

ՓՐԿԻԶ (Ֆրէզնօ, 1937 թ.): Հրատարակիչ՝ Պատ. Վահրամ Թահմիզեան: Այս հանդէսին խմբագրականները թարգմանութիւններն են հիմնապաշտ (Fundamentalist) համանուն օրկանին:

«Փրկիչ» հրատարակութիւնը եղած է Աւետարանական եկեղեց-

27. Յակոբ Յ. Թերզեան, Ատանայի Կեանքը, Պոլիս, 1909, էջ 37:

28. Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 710:

29. Ա. Ալպոյաճեան, նշ. աշխ., Բ. հտր., էջ 2303:

30. Ա. Ալպոյաճեան, նշ. աշխ., Ա. հտր., էջ 1285:

31. Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 983:

32. Մ. Ճիզմէնեան, նշ. աշխ., էջ 114:

33. Մ. Պարսամեան, Ծամհուր, տես՝ «Յեղափոխական Ալպոլ», Պէյրուք, 1971, էջ 187:

34. Մ. Ճիզմէնեան, նշ. աշխ., էջ 114:

35. Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 711:

ւոյ ծոցէն դուրս եկած «Թէսլիմճիներ»ու (րուհճի) աղանդին³⁶ :

[ԱնԱնՈՒՆ ԹԵՐԹ] (Պուէնոս Այրէս, 1924 թ.) : Ալեքսան-տրեթի «Զարթօնք» շաբաթաթերթի Պուէնոս Այրէսի թղթակիցը, իր 12 Օդոստոսի, 1924 թուակիր³⁷ «Տեղեկութիւններ Հար. Ամերիկա-յէն»³⁸ թղթակցութեամբ կը յայտնէ թէ, տեղւոյն դաշնակցականները, այդ օրերուն սկսած են լոյս ընծայել կիսամսեայ խմորատիպ թերթ մը :

Այդ թուականին Պուէնոս Այրէսի մէջ լոյս կը տեսնէին հայե-րէն երեք թերթեր միայն, առաջին՝ «Արժանթինեան Մամուլ» (օր-կան Ս.Դ.Շ. Կուսակցութեան), երկրորդը՝ «Նոր Երկիր», որուն մա-սին յիշատակութիւն կայ յիշեալ թղթակցութեան մէջ, իսկ երրորդը՝ «Որհրգային Հայաստան», որ նոյնպէս չէր կրնար դաշնակցութեան հրատարակութիւնը ըլլալ :

36. Ա. Ալպոյաճեան, նշ. աշխ., Բ. հտր., էջ 2283 :

37. Տպագրական սխալով մը՝ յօդուածին մէջ «1920» ք. արձանագրուած է, ինչ որ չի կրնար ճիշդ ըլլալ, քանի որ հոն յիշուած «Նոր Երկիր» քերթը սկսած է լոյս տեսնել 1922 ք. ին :

38. *Զարթօնք*, Ալեքսանտրեք, Ա. տարի, քիւ 23, 20 Սեպտ.ի, 1924 :

NEW DISCOVERIES OF ARMENIAN PERIODICALS

MIHRAN MINASSIAN

(Summary)

In this article the author presents thirty-five new names of Armenian periodicals which are not included in the standard published bibliographies of Armenian periodicals.